

Աթոռին համար երեք յօդուածով կանոն մը դրաւ.¹

“Ն-ի. եթէ յայսմ հետէ եկամուտ ոք որ ի Սուրբ Երուսաղէմ չիցէ սնեալ եւ կատարելապէս Հին եւ Նոր Կտակարանաց աշակերտեալ, եւ զամենայն զեւս եւ զմուտս Սրբոյն Երուսաղիմայ Աթոռոյն չիցէ իմացեալ եւ բազմաւ ժամանակաւ չիցէ վարժեալ յամենայն գործս Սրբոյ Երուսաղէմի, եւ թէ ոք մարդահաճութեան եւ սնափառութեան աղագաւ, թէ արտաքուստ եւ կամ թէ ի ներքուստ ժպրհիցի Պատրիարգ լինել նորա կամ Վէպէ. նշմբ-ը եւ չիցի:”

“Երկրորդ. եթէ յայսմ հետէ ոք յանդրջնեալ համարձակիցի զաշխարհական ոք, որ-դ եւ նշմբ անուամբ, եւ կամ այլ ինչ անուանակոչութեամբ ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ վերակացու եւ գլխաւոր գործակալ առնել, եւ նորա զայլ եւ այլ ճանապարհս ցոյց տալ, յորմէ պատճառի մնաս սրբոյն Յակոբայ. այնպիսին թէ կարգաւոր իցէ եւ թէ աշխարհական. նշմբ-ը եւ չիցի:”

“Երրորդ. եթէ ոք յայսմ հետէ կամիցի եւ կամ պատճառ լիցի կցել եւ միացուցանել զՊատրիարքութիւն Սրբոյն Սաղիմայ ընդ Առաջնորդութեան Կոստանդնուպոլսոյ, կամ այլ ինչ տեղւոյ, եւ ոչ կամիցի բացարձակ լինել ինքնին իշխանութեան սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի որպէս եւ այլոց ազգացն, այնպիսին թէ ո ոք եւ իցէ, որոշեալ լինիցի ի քրիստոնէական սուրբ հաւատոյս” (Հաննէ, էջ 137—138):

Այս բանաձեւերը, զորս Հաննէ կը վերագրէ Կարապետ Կաթողիկոսին, բնագիր ըլլայ կամ ոչ,

1 Անշուշտ անուշագործեան հետեւանքով է որ այս կարեւոր պարագան Ընդդէմ Օրոշոյցի մէջ փոխանակ Կոլոտի՝ վերագրուած է Կարապետ Կաթողիկոսին ուղղակի Հաննէի անունով (Ընդարձակ Օրացոյց Ազգ. Հիւանդանոցի 1901, Տպ. Մատթէոսեան, էջ 130):